# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

**«19» ապրիլի 2018 թվական N 52–Ա**

### ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՔԻ ՇԵԿՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Հովհաննես Ավետիքի Շեկոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող CHRYSLER TOWN COUNTR մակնիշի, 34 QN 620 պետհամարանիշի տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) 2018 թվականի գույքահարկի նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

Տրանսպորտային միջոցը «Օգնություն Հայ Ազատամարտիկներին» ծրագրի շրջանակներում «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից նվիրաբերվել է Հովհաննես Ավետիքի Շեկոյանին (հիմք՝ 2015 թվականի հուլիսի 16-ի նվիրաբերության պայմանագիր), ով մասնակցել է Արցախյան պատերազմին և հայրենիքի պաշտպանության գործում ներդրած անուրանալի ավանդի համար պարգևատրվել է բազմաթիվ հուշամեդալներով, մարտական գործողությունների ժամանակ ծանր վիրավորվելով զրկվել է երկու ստորին վերջույթներից և հանդիսանում է 1-ին կարգի հաշմանդամ (հիմք՝ տեղեկանք N 068362, տրված՝ 1994 թվականի հունվարի 31-ին): Հովհաննես Շեկոյանի ընտանիքի միակ եկամուտը նրա հաշմանդամության թոշակն է:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով, 8-րդ, 9-րդ կետերով և հիմք ընդունելով Հովհաննես Ավետիքի Շեկոյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի, Պարույր Սևակի փողոց, տուն 11, բնակարան 2 հասցեում, անձնագիր՝ AP 0570333, տրված՝ 2016 թվականի սեպտեմբերի 16-ին, Ոստիկանության 016-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ 3514590010) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2018 թվականի մարտի 27-ին N 3709 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն քաղաքացի Հովհանես Ավետիքի Շեկոյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի 2018 թվականի գույքահարկի նկատմամբ՝ ազատելով գույքահարկի 60.200 (վաթսուն հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Կողմ (25)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ս. Բալասանյան ______________

Ա. Ադամյան ______________

Հ. Կարապետյան ______________

Լ. Խաչատրյան ____________

Է. Մկրտչյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Մ. Սահակյան ____________

Լ. Սանոյան ____________

Վ. Եղիգարյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Վ. Հունանյան ____________

Գ. Սարգսյան ____________

Կ. Միքայելյան ____________

Տ. Փանոսյան ____________

Գ. Գրիգորյան ____________

Կ. Թաթարյան ____________

Ա. Տոնոյան ____________

Ս. Աստոյան ____________

Ա. Խաչատրյան ____________

Գ. Մաթևոսյան ____________

Ա. Աղանյան ____________

Ռ. Սարգսյան ____________

Ա. Մխիթարյան ____________

Ս. Մարտիրոսյան ____________

Հ. Պողոսյան ____________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«19» ապրիլի 2018 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«19» ապրիլի 2018 թվական N 53-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՊԱՐԵՐԻ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔ ՎԱՐՁԱԿԱԼԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Գյումրի համայնքի «Պարերի և սպորտային պարերի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ մարզադպրոց) աշխատակիցների աշխատանքային, ինչպես նաև մարզադպրոց հաճախող սաների ուսումնամարզական գործունեության պայմանների բարելավման անհրաժեշտությունից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն Գյումրի համայնքի Ալեք Մանուկյան 1/2 հասցեի, քաղաքացի Միշել-Նիկոլաս Ռոբերտի Դավուդյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 05092014-08-0005) 240 (երկու հարյուր քառասուն) քառակուսի մետր մակերեսով հասարակական կառուցապատման գործառական նշանակությամբ տարածքը՝ 3 (երեք) տարի ժամկետով վարձակալելուն:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի վարձավճարի չափ սահմանել՝ ամսական 300.000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված վարձավճարի վճարումները կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4216) «Գույքի և սարքավորումների վարձակալություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
4. Սահմանել, որ.
   1) վարձակալած տարածքի օգտագործման պայմաններն ու պահանջները կարգավորվում են վարձակալության պայմանագրով,

2) վարձակալած տարածքը նախատեսվում է օգտագործել մարզադպրոցի աշխատանքային, ինչպես նաև մարզադպրոց հաճախող սաների ուսումնամարզական գործունեության պայմանների բարելավման նպատակով:

| Կողմ (25) | Դեմ (0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|

Ս. Բալասանյան ____________

Ա. Ադամյան ____________

Հ. Կարապետյան ____________

Լ. Խաչատրյան ____________

Է. Մկրտչյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Մ. Սահակյան ____________

Լ. Սանոյան ____________

Վ. Եղիգարյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Վ. Հունանյան ____________

Գ. Սարգսյան ____________

Կ. Միքայելյան ____________

Տ. Փանոսյան ____________

Գ. Գրիգորյան ____________

Կ. Թաթարյան ____________

Ա. Տոնոյան ____________

Ս. Աստոյան ____________

Ա. Խաչատրյան ____________

Գ. Մաթևոսյան ____________

Ա. Աղանյան ____________

Ռ. Սարգսյան ____________

Ա. Մխիթարյան ____________

Ս. Մարտիրոսյան ____________

Հ. Պողոսյան ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ք.Գյումրի
«19» ապրիլի 2018 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

**«19» ապրիլի 2018 թվական N 54–Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ՄՈՒՇ-2» ԹԱՂԱՄԱՍԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑ N 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 2,527886 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի 2017 թվականի հուլիսի 14-ի N 02.2/4795-17, 2018 թվականի հունվարի 29-ի N 02.2/499-18 գրությունները ու քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի (հաշվառողի) հողաշինարարի որակավորում ունեցող անձի կողմից ներկայացված չափագրությունը՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ-2» թաղամասի 9-րդ փողոց N 5 հասցեում գտնվող դպրոցական շենքի պահպանման և սպասարկման համար զբաղեցրած Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 2,527886 (երկու ամբողջ հինգ հարյուր քսանյոթ հազար ութ հարյուր ութսունվեց միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը:

| **Կողմ (25)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ(0)** |
|---|---|---|

Ս. Բալասանյան ____________

Ա. Ադամյան ____________

Հ. Կարապետյան ____________

Լ. Խաչատրյան ____________

Է. Մկրտչյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Մ. Սահակյան ____________

Լ. Սանոյան ____________

Վ. Եղիգարյան ______________

Ա. Գրիգորյան ______________

Վ. Հունանյան ______________

Գ. Սարգսյան ______________

Կ. Միքայելյան ______________

Տ. Փանոսյան ______________

Գ. Գրիգորյան ______________

Կ. Թաթարյան ______________

Ա. Տոնոյան ______________

Ս. Աստոյան ______________

Ա. Խաչատրյան ______________

Գ. Մաթևոսյան ______________

Ա. Աղանյան ______________

Ռ. Սարգսյան ______________

Ա. Մխիթարյան ______________

Ս. Մարտիրոսյան ______________

Հ. Պողոսյան ______________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«19» ապրիլի 2018 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«19» ապրիլի 2018 թվական N 55-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի կողմից կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերի օգտագործման սխեմաները և ներկայացված ելակետային տվյալները՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և հաստատել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

**Կողմ (25)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ս. Բալասանյան ____________

Ա. Ադամյան ____________

Հ. Կարապետյան ____________

Լ. Խաչատրյան ____________

Է. Մկրտչյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Մ. Սահակյան ____________

Լ. Սանոյան ____________

Վ. Եդիգարյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Վ. Հունանյան ____________

Գ. Սարգսյան ______________

Կ. Միքայելյան ______________

Տ. Փանոսյան ______________

Գ. Գրիգորյան ______________

Կ. Թաթարյան ______________

Ա. Տոնոյան ______________

Ս. Աստոյան ______________

Ա. Խաչատրյան ______________

Գ. Մաթևոսյան ______________

Ա. Աղանյան ______________

Ռ. Սարգսյան ______________

Ա. Մխիթարյան ______________

Ս. Մարտիրոսյան ______________

Հ. Պողոսյան ______________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«19» ապրիլի 2018 թ.**

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2018 թվականի ապրիլի 19-ի
N 55-Ն որոշման

# Ց ՈՒ Ց Ա Կ

## Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերն աճուրդով օտարելու մեկնարկային գների և պայմանների

| Հ/Հ | Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/ | Ծածկագիրը մակերեսը քառ.մ | Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը | Հողամասի օգտագործման նպատակը | Հաստատված մեկնարկային գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հ.Մելքոնյան փողոց N 3/9 9-րդ գոտի | 08-001-0622-0092 29,4 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում | Ավտոտնակի կառուցում | 200 000 |
| 2. | Պ.Սևակի փողոց N 22 11-րդ գոտի | 08-001-0008-0004 10000.0 | Բնակավայրերի հասարակական կառուցապատում | Սպասարկման օբյեկտի կառուցում | 8 100 000 |
| 3. | Ֆորալբերգի փողոց N 8 11-րդ գոտի | 08-001-0008-0007 8000.0 | Բնակավայրերի հասարակական կառուցապատում | Սպասարկման օբյեկտի կառուցում | 6 480 000 |
| 4. | Գ.Նժդեհի հր. N 4/9 9-րդ գոտի | 08-001-550-0004 250.0 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում | Բնակելի տան կառուցում | 750 000 |
| 5. | Կոշտոյան փող. N 5/12 10-րդ գոտի | 08-001-0431-0026 264.0 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում | Բնակելի տան կառուցում | 1056 000 |

Քաղաքաշինության և
ճարտարապետության բաժնի պետ՝ Ա.Հակոբյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

**«19» ապրիլի 2018 թվական N 56-Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑ N 9/10 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 74-րդ հոդվածի, 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի կողմից ներկայացված հողամասի ելակետային տվյալները՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Շիրակացի փողոց N 9/10 հասցեի 0,034363 (զրո ամբողջ երեսունչորս հազար երեք հարյուր վաթսուներեք միլիոներորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը մրցույթով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել 3 (երեք) տարի ժամկետով՝ բարեկարգման և կանաչապատման նպատակով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ ամսական 10.000 (տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

**Կողմ (25)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ս. Բալասանյան ____________

Ա. Ադամյան ____________

Հ. Կարապետյան ____________

Լ. Խաչատրյան ____________

Է. Մկրտչյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Մ. Սահակյան ____________

Լ. Սանոյան ____________

Վ. Եդիգարյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Վ. Հունանյան ____________

Գ. Սարգսյան ____________

Կ. Միքայելյան ____________

Տ. Փանոսյան ____________

Գ. Գրիգորյան ____________

Կ. Թաթարյան ____________

Ա. Տոնոյան ____________

Ս. Աստոյան ____________

Ա. Խաչատրյան ____________

Գ. Մաթևոսյան ____________

Ա. Աղանյան ____________

Ռ. Սարգսյան ____________

Ա. Մխիթարյան ____________

Ս. Մարտիրոսյան ____________

Հ. Պողոսյան ____________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«19» ապրիլի 2018 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

**«19» ապրիլի 2018 թվական N 57-Ն**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի N 140-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, 69-րդ հոդվածի 1-ին մասով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 06-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 140-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) 8-րդ տողի 6-րդ սյունակի «600 000» թիվը փոխարինել «450 000» թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Կողմ (25)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ս. Բալասանյան ____________

Ա. Ադամյան ____________

Հ. Կարապետյան ____________

Լ. Խաչատրյան ____________

Է. Մկրտչյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Մ. Սահակյան ____________

Լ. Սանոյան ____________

Վ. Եղիգարյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Վ. Հունանյան ____________

Գ. Սարգսյան ____________

Կ. Միքայելյան ____________

Տ. Փանոսյան ____________

Գ. Գրիգորյան ____________

Կ. Թաթարյան ____________

Ա. Տոնոյան ____________

Ս. Աստոյան ____________

Ա. Խաչատրյան ____________

Գ. Մաթևոսյան ____________

Ա. Աղանյան ____________

Ռ. Սարգսյան ____________

Ա. Մխիթարյան ____________

Ս. Մարտիրոսյան ____________

Հ. Պողոսյան ____________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«19» ապրիլի 2018 թ.**